Հաստատում եմ՝

Տնօրեն՝ _____ Ա.Լ.Մամյան

«11» ապրիլի 2022թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղին կից Ա.Հ.Երիցյանի անվան վարժարանի **2022-2023 ուստարվա** ընդունելության

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն Կանոնակարգը սահմանում է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղին կից Ա.Հ.Երիցյանի անվան վարժարանի 7-12-րդ դասարաններում ընդունելության կազմակերպման և անցկացման կարգը (այսուհետ՝ Ընդունելություն):

1.2 Ընդունելությանը մասնակցելու իրավունք ունեն ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.3 Ընդունելությունն իրականացվում է հետևյալ երկու առարկաներից ընդունելության գրավոր թեստավորման արդյունքների հիման վրա.

1. Մաթեմատիկա

2. հայերեն կամ ռուսերեն

1.4 Առարկաներից յուրաքանչյուրի գնահատումն իրականացվում է *50 միավորային համակարգով* (յուրաքանչյուր առարկայի համար անցողիկ է համարվում *20 միավորը*):

1.5 Վարժարանում ուսուցումն իրականացվում է պայմանագրային հիմունքով:
2020-2021 ուստարվա ուսուցման վճարը 1.100 000 /մեկ միլիոն հարյուր հազար/ դրամ է:

1.6 Վարժարանում գործում է զեղչերի ճկուն համակարգ՝ համաձայն զեղչի մասին կանոնակարգի:

1.7 Ընդունելությունը և թեստավորումն իրականացվում է տնօրենի հրամանով հաստատված ընդունող հանձնաժողովների կողմից:

2. Փաստաթղթերի ընդունումը

2.1 Ընդունելությանը մասնակցելու համար դիմորդն իր օրինական ներկայացուցչի հետ դիմում է ներկայացնում ընդունող հանձնաժողով:

2.2 Դիմումներն ընդունվում են *2022թ. ապրիլի 12-ից*՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-16:00, ընդմիջում՝ 13:00-14:00:

3. Դիմորդների ընդունելությունը

3.1 Ընդունելության թեստավորումն իրականացվում է հետևյալ ժամկետներում.

1. Մաթեմատիկա *– 05.07.2022թ.*

2. Հայերեն կամ ռուսերեն *– 06.07.2022թ.*

3.2 Ընդունելության թեստավորումը հաջողությամբ անցած դիմորդների օրինական ներկայացուցիչների հետ կրթական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը կնքվում է մինչև 2022թ. հուլիսի 10-ը, իսկ առաջին վճարումը կատարվում է մինչև 2022թ. հուլիսի 15-ը:

3.3 Նախորդ կետում նշված ժամկետները խախտելու դեպքում ընդունելության թեստավորման արդյունքները չեղարկվում են:

3.4 Թափուր տեղերի առկայության և լրացուցիչ ընդունելության մասին հայտարարություն կտրվի 2022թ. հուլիսի 16-ին: